ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 057/2014-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

01.07.2014թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով, հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի Կառավարման խորհրդի կողմից 03.03.2014թ. թիվ 8-Ա որոշմամբ հաստատված Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսուցման ծրագիրը, Կառավարման խորհրդի կողմից 06.06.2014 թվականին ընդունված թիվ 14-Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 27.06.2014թ. թիվ 25Լ որոշումը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի 19.06.2014թ. թիվ 30/9-161-14 գրությունը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց բաշխումը ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 2-ի:
3. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 3-ի:
4. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա քրեաիրավական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների

ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 4-ի:

5. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա վարչաիրավական մասնագիտացմամբ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 5-ի:

6. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2014թ. ուսումնական տարվա դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 6-ի:

Ռեկտոր **Ռ.Մելիքյան**